Doi:10.54503/0135-0536-2022.2-9

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Ա-ԴՈ)*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Ա-Դո, Նոր Բայազետ, Երևան, ՀՅԴ, հայ-թաթարական ընդհարումներ, Արցախ, Վան, Ռոստոմ, Արամ Մանուկյան, Նիկոլ Աղբալյան, Փետրվարյան հեղափոխություն, Սալմաստ, Սարդարապատ, Գարեգին Նժդեհ:

Նախաբան

1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից Արևելյան Հայաստան վերաբնակվեցին 300 ընտանիքներ, որոնք հաստատվեցին Սևանի ավազանում ու իրենց բնակավայրն անվանեցին Նոր Բայազետ: Նորաբնակների թվում էին նաև Տեր-Մարտիրոսյանները[1]:

Գաղթականներին նոր բնակավայր էր ուղեկցել բայազետցի Մկրտիչ աղա Արծրունին, որն էլ համարվում է ապագա քաղաքի հիմնադիրը: Նրա մահից հետո բնակչության համար առավել ազդեցիկ դեմքը և փաստացի ղեկավարն էր եղբայրը՝ Բարսեղ աղա Արծրունին, ով Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի օգնությամբ կառուցում է Սբ. Աստվածածին եկեղեցին, ապա 1852 թ. հիմնում է ուսումնարան, որը սկսում է գործել 1854 թ.[2]: Նշենք, որ աշակերտները, ըստ ծնողների կարողության, ուման համար տարեկան որոշակի գումար էին վճարում, իսկ անապահով ընտանիքների երեխաները սովորում էին անվճար: Բ. Արծրունին գիտակցում էր, որ նորաբնակները չեն տիրապետում ռուսերենի, չգիտեն օրենքները, ուստի անհրաժեշտ է նրանց ուսուցանել ռուսերեն, «որպէս զի դորանով թէ՛ վարչական կանոններին ծանօթանային և թէ՛ բողոքող և պատասխանատու ժողովրդի մեծամասնութիւնը անգիտակցաբար յաճախ տուգանքի և պատժի չենթարկուէր»[3]: Նա դիմում է իշխանություններին, որոնք ընդառաջ գնալով՝ 1855 թ. հիմնում են տարրական ուսում-

---

* *Ներկայացվել է 30. III. 2022 թ., գրախոսվել է 17. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. VI. 2022 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ-ի և ՀՀՌՀ (ՌԴ) տրամադրված ֆինանսավորմամբ 20RF–103 ծածկագրով գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:*

[1] *Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 5: Այս տեղեկությունների հեղինակն Ա-Դոն է, որն իր ուսումնասիրությունն անվանել է «Քառասնամեակ Նոր-Բայազետի հայոց ուսումնարանի (1852–1892)» (տե՛ս Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 6):*

[2] *Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 7–8:*

[3] *Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 8:*

նարան (первоначальное одноклассное училище)[4]*: 1867 թ. Արծրունու ջանքերով արական ուսումնարանին կից հիմնվում է իգական ուսումնարան:*

Իր կրթօջախի պատմությունն ուսումնասիրած և այդ մասին հետազոտություն գրած բծախնդիր Ա-Դոն ցավով նշում է, որ հիմնադրման օրվանից մինչև 1870-ական թվականները ուսումնարանի արխիվում չեն պահպանվել արձանագրություններ կամ այլ փաստաթղթեր, իսկ մինչև 1880-ական թվականները եղածներն այնքան համառոտ են ու կցկտուր, որ «մարդ դժվարանում է մի որոշ գաղափար կազմել ուսումնարանի մի ամբողջ տասնեակ տարուայ կեանքի մասին»[5]*:*

Շուրջ 90 տարի առաջ հիմնադրված Նոր Բայազետ քաղաքը հայ հասարակությանը տվեց բազմաթիվ գործիչներ, որոնք իրենց համեստ լուման ներդրեցին հայոց պատմության մեջ:

Ուսումնառությունը և հասարակական գործունեության սկիզբը

XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում հայ հասարակությունը իր համար բացահայտում է հասարակական և քաղաքական ասպարեզ մտած մի նոր անձնավորության՝ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին (1867–1954), որն ավելի շատ հանրածանոթ էր Ա-Դո կեղծանունով[6]*: Հ. Տեր-Մարտիրոսյանը*[7] *ծնվել է 1867 թ. հունվարի 4-ին Նոր Բայազետ քաղաքում: Ընտանիքը եղել է բազմանդամ՝ ութ երեխա՝ հինգ տղա և երեք աղջիկ: Հ. Տեր-Մարտիրոսյանը երրորդ զավակն էր: Հայրը զբաղվել է առևտրով ու անասնապահությամբ:*

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1880 թ. մահանում է հայրը, և մայրը հարկադրված է լինում Ա-Դոյին ուղարկել Երևան, որտեղ եղբայր Սիրականը ուներ փոքրիկ խանութ: 1881 թ. սեպտեմբերի 2-ին 14-ամյա Ա-Դոն ճանապարհվում է Երևան: Պատանին հիացմունքով է նկարագրում Երևանը. «Բուսականությունից զուրկ ... Բայազետից հետո այգիներով շրջապատված ու բուսազարդ Երևանը և այն էլ սեպտեմբեր ամսին, երբ այդ քաղաքը ներկայացնում է պտուղների ու առատության մի ծով, ինձ վրա թողեց հմայիչ տպավորություն»[8]*:*

Խանութը չէր գրավում Ա-Դոյին: Սկզբնապես իր ազատ ժամանակն օգտագործում էր «Մշակ» լրագրի ընթերցման համար, որի էջերում ծանոթացավ Րաֆֆու վեպերին: Ա-Դոյի բնութագրմամբ, «Մշակը» «նոր սերնդի դավա-

---

[4] Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 9:

[5] Ն ա հ ա պ ե տ յ ա ն. 2011, 11:

[6] Նշենք, որ Ա-Դոյի ավագ եղբայր Սիրականը (1863–1933) եղել է ՀՀ խորհրդարանի պատգամավոր, Հայ ժողովրդական կուսակցության անդամ: Մյուս եղբայրը՝ Միքայելը (Մար, Մար Շիմուն, 1869–1931), անդամագրվելով ՀՅ Դաշնակցությանը, ակտիվ մասնակցություն է ունեցել հայ ազատագրական պայքարին: Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Գ ա ս պ ա ր յ ա ն, Ս ա հ ա կ յ ա ն. 2015, № 3, 197–233:

[7] Ժամանակակիցը՝ Եփրեմ Սարգսյանը, Ա-Դոյին նկարագրել է այսպես. «Երկարահասակ, նիհար, ջղուտ դէմքով, սեւ ու անհանդարտ աչքերով եւ թախծոտ արտայայտութեամբ: Լուրջ, մինչեւ մռայլութեան աստիճան եւ ինքնամփոփ» (տե՛ս Ս ա ր գ ս ե ա ն. 1952, 90):

[8] Ա-Դ ո. 2015, 34:

նանքների, իղձերի և առաջադեմ մտքերի արտահայտիչը»[9] էր: Երևանում նա գտնում է համախոհների, որոնք հիմնականում ռուսաստանյան տարբեր բուհերի և Գևորգյան ճեմարանի ուսանողներ էին: Նրանք հավաքվում և քննարկում էին ազգային ու քաղաքական տարաբնույթ թեմաներ, հարցեր:

Ա-Դոն ակտիվորեն զբաղվում է ինքնակրթությամբ, որին նպաստում է երևանցի բժիշկ Լևոն Տիգրանյանը, որն ուներ հարուստ գրադարան և ընթերցանության նպատակով գրքեր էր տրամադրում երևանցիներին, հիմնականում դպրոցահասակ երեխաներին: Երբ նրանք գիրքը ընթերցելուց հետո վերադարձնում ու նորն էին խնդրում, Լ. Տիգրանյանը պահանջում էր պատմել գրքի բովանդակությունը և, երբ երեխան «անցնում» էր քննությունը, միայն այդ ժամանակ էր նոր գիրք տալիս[10]:

1885 թ. սեպտեմբերին Ա-Դոն ծառայության է անցնում Աֆրիկյանների[11] նշանավոր առևտրական տանը, որը տնօրինում էր Երևանի նահանգի ողջ առևտրին, այդ թվում՝ բամբակի: Իր հուշերում նա նկարագրում է հայ վաճառականների կողմից կատարված մեքենայությունները, որոնց նպատակն էր լրացուցիչ շահույթ կորզել՝ խաբելով կամ մոլորեցնելով մանր առևտրականներին կամ գնորդներին:

Ա-Դոն նկատում է մեկ այլ վտանգավոր միտում, թե ինչպես բամբակի առևտրի մենաշնորհն աստիճանաբար անցնում է Մոսկվայի և Լոձի վաճառականներին, որոնք աստիճանաբար շուկայից դուրս են մղում տեղացիներին: Նա ուսումնասիրում է հիմնախնդիրն ու վերլուծական հոդված գրում «Բամբակի առևտուրը Երևանում» վերնագրով և ուղարկում է «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունուն[12]: Թերթի 1888 թ. հունվարի 23-ի համարում տպագրվում է Ա-Դոյի նշված հոդվածը: Նա հուշագրում է. «Իմ ուրախությանը չափ չկար ...: Այդ մոմենտից ես ինձ զգացի այլ մարդ»[13]: 1891 թ. Ա-Դոն պաշտոնապես դարձավ «Մշակի» երևանյան թղթակիցը:

1887 թ. Անդրկովկասի հայ բնակչությունը ենթակա էր զորակոչի: 1888 թ. հոկտեմբերի 18-ին Ա-Դոն ներկայանում է զինվորական հանձնաժողովին, որը վիճակահանությամբ կատարում էր զինակոչը: Ճակատագիրն այնպես դասավորվեց, որ զինակոչիկների քանակը լրացվեց մինչև Ա-Դոին հասնելը. նա ազատվեց զինվորական ծառայությունից՝ ստանալով աշխարհազորի երկրորդ կարգի պահեստայինի վկայական:

Սկզբնապես արևելահայերն ամեն կերպ աշխատում են խուսափել պարտադիր զինվորական ծառայությունից, սակայն ռուսական կառավարության այդ որոշման արդյունքները երևան եկան շուրջ երեք տասնյակ տարի անց, երբ հայ զինվորը զենքը ձեռքին սկսեց պաշտպանել իր հայրենիքը: Ինչպես փաստում է Ա-Դոն, «Ռուս կառավարությունը՝ հանդերձ իր բացասական

---

[9] *Ա-Դո. 2015, 39:*

[10] *Ա-Դո. 2015, 44:*

[11] *Ա-Դոն առանձնակի հարգանքով է հիշում Աֆրիկյան եղբայրներից Տիգրանին, որը կրթված անձնավորություն էր և բարեգործ: Նրա անձնական նախաձեռնությամբ ու օժանդակությամբ տարբեր բնակավայրերում հիմնվում են երկու տասնյակից ավելի տարրական դպրոցներ:*

[12] *Գասպարյան, Սահակյան. 2015, № 16, 215–221:*

[13] *Ա-Դո. 2015, 56:*

հատկություններով ... արել է հայ ժողովրդին մի մեծ ծառայություն, այն է, որ տվել է նրան զինվորական կրթություն»[14]:

Ա-Դոյի երազանքն էր շարունակել կրթությունը Երևանի թեմական դպրոցում, ուստի նա 1889 թ. մայիսի 1-ին դուրս է գալիս Աֆրիկյանների առևտրական տան աշխատանքից և սեպտեմբերի 25-ին քննություններ հանձնելուց հետո ընդունվում է հինգերորդ դասարան, որն ավարտում է 1890 թ.: Համադասարանցին՝ Աշոտ Աթանասյանը[15], վկայում է՝ նա իր հիմնական հետազոտությունները կատարել է 1890-ական թվականներից մինչև 1920 թ., և որ աչքի ընկնող գրական ու քաղաքական ուժ էր՝ «իր հրապարակախոսական մի շարք ուսումնասիրություններով»[16]:

1891 թ. մահանում է Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսը, ու թափուր մնացած աթոռի համար պայքար է ծավալվում Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) և Կ. Պոլսի պատրիարք Խորեն Աշճգյանի միջև: Ա-Դոն գործուն մասնակցություն է ունենում Գ. Արծրունուն՝ որպես Կովկասի հայության թեմական պատգամավոր ընտրելու գործընթացին: Համատեղ պայքարի շնորհիվ՝ 1892 թ. մայիսի 5-ին Էջմիածնում միաձայն կաթողիկոս ընտրվեց Մ. Խրիմյանը:

Ա-Դոն հուշերում աշխատել է շրջանցել իր և եղբոր՝ Միքայելի ՀՅԴ ու ավագ եղբոր՝ Սիրականի Սահմանադիր-ռամկավար կուսակցության անդամ լինելու փաստը, որը խորհրդային տարիներին խիստ վտանգավոր էր[17]: Բացի այդ, որևէ ակնարկ չի անում Արևմտյան Հայաստան զենք ու զինամթերքի փոխադրությանը մասնակից լինելու մասին: Նրա այդ գործունեության մասին տեղեկանում ենք ոստիկանական տեղեկագրերից: 1896 թ. հունվարի 15-ին և 26-ին ոստիկանությունն Աղստաֆա կայարանում բռնագրավում է ատրճանակի 13 հազար փամփուշտ, որի հասցեատերն էր Մարտիրոսով ազգանունով անձը: Բեռն ուղարկվել էր «Նաղեժդա» ընկերության միջոցով, որի աշխատակիցն էր եղել Ա-Դոն: Պատմաբան Գևորգ Խուդինյանի կարծիքով՝ «Այդ փամփուշտներն ուղարկվել էին ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանին (Ա-Դո)»[18]:

---

[14] *Ա-Դ ո. 2019, 131:*

[15] *Աշոտ Աթանասյան (1870–1941) – գյուղատնտես, երգիծաբան, հրապարակախոս և հասարակական գործիչ: Ուսանել է գյուղատնտեսություն Լայպցիգի համալսարանում: Հիմնադրել և խմբագրել է «Աշխատանք», «Նոր աշխատանք» շաբաթաթերթերը (1906–1907), «Գյուղատնտես» մասնագիտական հանդեսը: Հանդես է եկել «Սալ-մանէ», «Ստորա-կետ», «Սալ-Ման» և այլ ծածկանուններով: Զգալի գործունեություն է ծավալել Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության վերականգնման գործում (1915–1917): Խորհրդային տարիներին շարունակել է աշխատել գյուղատնտեսության բնագավառում:*

[16] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 314, ց. 1, գ. 21, թ. 54:*

[17] *Ա-Դոյի դուստրը՝ տիկին Ադոլյանը, մեզ տեղեկացրել է՝ 1937–1938 թթ. հայտնի էր դարձել, որ հորը ձերբակալելու էին: Ա-Դոն նամակով դիմում է ԽՍՀՄ կառավարության և ԽՄԿԿ քաղբյուրոյի անդամ Անաստաս Միկոյանին, որի միջամտությունը փրկում է Ա-Դոյին կալանավորվելուց:*

[18] *Խ ո ւ դ ի ն յ ա ն. 2006, 270:*

Ա-Դոն եղել է ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ[19], սակայն ինչ-ինչ հարցերում տարաձայնություններ ունենալով՝ դադարեցրել է կուսակցությանն անդամակցելուց: Ժամանակակիցը վկայում է. «Իր մայր կուսակցութեան դէմ նա երբեք թշնամական դիրք չբռնեց եւ մնաց բարեմիտ քննադատողի դերում»[20]:

Սեփական օճառի արտադրություն դնելու անհաջող փորձից հետո Ա-Դոն ծառայության է անցնում «Խանզադյանի մագազին» խանութում, որտեղ աշխատում է մինչև 1905 թ.: Գործերի բերումով լինում է Մոսկվայում, այցելում է թանգարաններ, պատկերասրահներ: Մեծ թատրոնում ներկա է լինում համաշխարհային հռչակ ունեցող երգիչ Ֆյոդոր Շալյապինի համերգին:

1903 թ. տպագրվում է Ա-Դոյի՝ ներկայիս գիտական հասարակությանը սակավ հայտնի «Մակեդոնիա» գրքույկը, որում հանգել է այն հետևության, թե օսմանյան տիրապետության ներքո գտնվող Մակեդոնիայի համար հակագաղութային ելույթների ազդակ է եղել թուրքական կառավարության կողմից 1895 թ. մայիսի 11-ին ընդունված և հայկական նահանգների համար նախատեսվող Մայիսյան բարենորոգումների ծրագիրը[21]:

1905 թ. հոկտեմբերի 7-ին Ա-Դոն ընդունվում է Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի առաջին կուրս՝ որպես ազատ ունկնդիր: Այդ ժամանակ ողջ Ռուսաստանում, ինչպես նաև Խարկովում, սկսվել էր Ռուսական առաջին հեղափոխությունը: Ամենուրեք տեղի էին ունենում հակակառավարական բուռն ելույթներ, գործադուլներ, ոստիկանության ու զորքի հետ ընդհարումներ: Այդ ժամանակ Խարկովի գեներալ-նահանգապետն էր գեներալ Նիկոլայ Պեշկովը, որին Ա-Դոն պետք է հանդիպեր 1916 թ., երբ նա ցար Նիկոլայ II-ի կողմից նշանակվել էր Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետ:

Ա-Դոն, տեղեկանալով, որ համալսարանն անհայտ ժամանակով չի գործելու, 1905 թ. նոյեմբերի կեսերին վերադառնում է Թիֆլիս, որտեղ ականատես է լինում «ակնհայտի արհեստականորեն առաջ քաշված հայ-թուրքական ընդհարման»[22]:

Հայ-թաթարական ընդհարումների լուսաբանումն Ա-Դոյի ուսումնասիրությունում

Հայությունն ամբողջովին կլանված լինելով Արևմտյան Հայաստանով՝ անուշադրության էր մատնել արևելահայության հետ կապված հիմնախնդիրները, հատկապես՝ ինքնապաշտպանության կազմակերպումը: Բոլորի համար անսպասելի էր 1905 թ. փետրվարին սկսած և աստիճանաբար ահագնացած հայ-թաթարական ընդհարումները[23], որոնց դրդողը ռուսական իշխանութ-

[19] Խուդինյան. 2006, 338:
[20] Սարգսեան. 1952, 91:
[21] Ա-Դո. 1903, 12–13:
[22] Ա-Դո. 2015, 111:
[23] Դեռևս 1888 թ. հունվարի 5-ին ոմն Սուլթան բեկի կողմից Թիֆլիսում՝ Երևանի շուկայում, սպանվում են երկու հայ: Ինչպես երևում է, օրն էլ պատահական չէր ընտրված. Սբ. Ծննդյան նախօրյակն էր: Սկսվում է իրարանցում, որի ընթացքում սպանվում են տասից ավել հայեր և թաթարներ: Փոխանակ պատժելու մարդասպա-

յուններն էին: Անուշադրության էր մատնվել նման հնարավորությունը, երբ կար տեղեկություն, որ 1903 թ. վերջին «կառավարությունը հրաւիրել էր թուրք բէգերին օգնութեան հայերի դեմ, բայց վերջինները հրաժարուել էին»[24]:

Բաքվում 1905 թ. փետրվարի 6-ի ընդհարումն ազդանշան էր, որպեսզի սկսվեն հարձակումները հայ բնակչության վրա: Ռուսահպատակ մահմեդականներին աջակցում են Օսմանյան կայսրության և Պարսկաստանի շիա հավատակիցներն ու ցեղակիցները[25]: Ա-Դոյի կարծիքով՝ «Ազգամիջյան ընդհարումների նպաստավոր վայր էր Բաքուն: Նախ այդ քաղաքն իրենից ներկայացնում էր բազմացեղ ժողովուրդների խառնարան, որում ռեակցիան կարողանում էր հավաքագրել բավականաչափ ուժեր»[26]: Կովկասի կառավարչապետության, ապա փոխարքայության հայության ինքնապաշտպանությունը հիմնականում ստանձնում է ՀՅԴ-ն, որի «կազմակերպման կենտրոնական դեմքը Ռոստոմն էր»[27]:

Ա-Դոն Երևանում անձամբ է ականատես լինում բախումներին, ապա ձեռնարկում է փաստահավաք հսկայածավալ աշխատանք, անհրաժեշտության դեպքում այցելում ընդհարման վայրերը, զրուցում ականատեսների և ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: Միաժամանակ հոդվածներ է ուղարկում «Մշակին», որտեղ ներկայացնում է բախումները տարբեր բնակավայրերում: Անձամբ լինում է Գանձակի, Շուշիի, Սյունիքի (Զանգեզուր) գավառներում և այլ վայրերում[28]:

Ժամանակակիցը՝ Եփրեմ Սարգսյանը, վկայում է, որ բախումների ժամանակ «Ադօն սառնասիրտ, հիւանդի վիճակը քննող բժշկի պէս հաշուում էր թէ՝ առաջին գնդակը երբ՞ պայթեց, ժամը քանիսի՞ն եւ որ՞ կողմից ու դիրքից»[29]: Ա-Դոն անաչառ լինելու համար տեղեկություններ էր հավաքում նաև ռուսական ոչ պաշտոնական մամուլից, քանի որ վերջինս ամեն կերպ աշխատում էր քողարկել կամ խեղաթյուրել իրականությունը:

Հայությունը հատկապես ծանր կորուստներ ունեցավ Նախիջևանում. 1905 թ. մայիսի 12-ին այստեղ սկսվում է հայ-թաթարական ընդհարումը, որը, Ա-Դոյի գնահատմամբ, « … ոչ թե ընդհարում էր, այլ հարձակում, սպանություն, կողոպուտ, որը տարածվեց Նախիջևանի շրջանի բոլոր հայաբնակ գյուղերում»[30]:

Ա-Դոն ուղղակիորեն նշում է, որ հայ-թաթարական կռիվները ծրագրվել են ռուսական բարձրագույն իշխանության կողմից, իսկ «անմիջական գործադրողը եղաւ Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձեն, գօլիցինեան ըէժիմի այդ ստոր, վատթարագոյն ներկայացուցիչը»[31]: Ակներև է, որ բախումներում իրենց

նին՝ իշխանությունները տարբեր պատժաժամկետների՝ 4-ից մինչև 12 տարով դատապարտեցին հինգ հայի (տե՛ս Ա-Դ ո. 2013, 30–31):

[24] *Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 303–304:*

[25] *Հայոց պատմություն. 2015, 20:*

[26] *Ա-Դ ո. 2013, 115:*

[27] *Հայոց պատմություն. 2015, 21:*

[28] *Ա-Դ օ. 1907, 1:*

[29] *Ս ա ր գ ս ե ա ն. 1952, 90:*

[30] *Ա-Դ օ. 1907, 116:*

[31] *Ա-Դ օ. 1907, 5–6:*

սև դերը կատարեցին թաթար կալվածատերերը, որոնք «Անգիտակ խաւար թուրք մասսային հաւատացրին, որ նրան կեղեքողը, նրա աղքատության ու թշառութեան պատճառը հայն է»[32]:

Ա-Դոն ցավով նշում է, որ 1905–1906 թթ. ցարական կառավարությանը հաջողվեց ժողովրդական զանգվածներին շեղել իր դեմ պայքարելուց՝ միմյանց դեմ ուղղելով ժողովուրդներին[33]:

Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ փորձեր են կատարվում կռվող կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու և հաշտվեցնելու համար, սակայն՝ ապարդյուն[34]: Ընդհանրապես, թաթարները նման փորձերը դիտում են որպես թուլություն և վերակսում են հարձակումները: Արցախի, մասնավորապես՝ Շուշիի պաշտպանությունը ղեկավարող խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյանը) իր հուշերում վկայում է, որ երբ հայերը սկսեցին թաթարների նման նրանց տները հրդեհել, կանանց ու երեխաներին սպանել, թշնամին բողոքել է՝ պահանջելով դադարեցնել դրանք. «Երբ նոցա ասում [ենք], թե դուք էլ եք նոցա վերաբերմունքը ցույց տվել, նոքա պատասխանել են, թե մենք տգետ ենք, դուք չպետք է անեիք մեզ նման»[35]:

Ա-Դոն տենդագին աշխատում է նոր ուսումնասիրության՝ հայ-թաթարական բախումների պատմությունը հրատարակության պատրաստելու վրա՝ բազմիցս ստուգելով ու վերստուգելով փաստերը և վկայությունները: Եվ երբ գիրքը պատաստ էր, նա այն հանձնում է տպարան՝ «հրատարակման և վաճառահանման իրավունքը թողնելով տպարանատիրոջը, որովհետև իմ միջոցներով աշխատությունս հրատարակել հնարավոր չէր»[36]:

Հարկ է նշել, որ առ այսօր Ա-Դոյի «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1905 թթ.)» աշխատությունը մնում է հայ-թաթարական ընդհարումները մանրամասն ուսումնասիրած եզակի գործ. հեղինակն անձամբ է եղել կռիվների վայրերում և հավաքել ականատեսների ու մասնակիցների վկայությունները:

Ուսումը Ս. Պետերբուրգում, ճանապարհորդությունն Արևմտյան Հայաստան, ձերբակալությունն ու բանտարկությունը

Հայ-թաթարական ընդհարումների ավարտից հետո Ա-Դոն որոշում է ուսումը շարունակել Ս. Պետերբուրգում 1907 թ. հիմնված Հոգենյարդաբանական ինստիտուտում, որը միաժամանակ գիտահետազոտական ու բարձրագույն

---

[32] *Ա-Դ օ. 1907, 6:*

[33] *Ա-Դ օ. 1907, 6:*

[34] *1906 թ. փետրվարի 20-ից մարտի 6-ը Կովկասի փոխարքայի պալատում տեղի է ունենում հայ-թաթարական 60 ներկայացուցիչների ժողով, որը նպատակ ուներ հաշտեցնել հակամարտ կողմերին: Հայերը մեղադրում են իշխանություններին, որ վերջինս էր բախումների դրդողը, իսկ թաթար ներկայացուցիչները մեղադրում են հայերին և ՀՅԴ-ին: Արդյունքում ոչինչ չի փոխվում, և ընդհարումները վերսկսվում են: Ա-Դոյի կարծիքով՝ «Հաշտության այդ բոլոր փորձերը ճիշտ այն նշանակությունն ունեցան, ինչ որ կատակերգությունը բեմի վրա» (տե՛ս Ա-Դ օ. 1907, 410–411):*

[35] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 3:*

[36] *Ա-Դ ո. 2015, 115:*

ուսումնական հաստատություն էր[37]*: Ինստիտուտի պրոֆեսորների թվում էին ժամանակի նշանավոր գիտնականներ՝ հոգեբան Վլադիմիր Բեխտերևը, պատմաբան և իրավաբան Մաքսիմ Կովալևսկին, փիլիսոփա ու տնտեսագետ Եվգենի դե Ռոբերտին, պատմաբան, հետագայում ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Եվգենի Տարլեն և ուրիշներ:*

Երիտասարդին հիացրել էր Ս. Պետերբուրգը: Այցելել է թանգարաններ, թատրոններ, գրադարաններ: Ա-Դոյին հաճելիորեն զարմացրել էր ինստիտուտի ուսանողությունը և պրոֆեսորադասախոսական կազմի՝ անկաշկանդ, պարզ ու ընկերական հարաբերությունները: Ինչպես նշում է, «Դասախոսությունների ոճը նոր էր, բովանդակություններն ավելի ևս նոր ...»[38]*:*

... Ա-Դոն վաղուց էր ցանկանում լինել Արևմտյան Հայաստանում և անձամբ ուսումնասիրել հայության դրությունը, կատարել որոշակի ուսումնասիրություններ: Առիթ հանդիսացավ 1908 թ. հուլիսի 10-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած պետական հեղաշրջումը, որի հետևանքով սուլթան Աբդուլ Համիդ II-ը զրկվեց բացարձակ իշխանությունից, և երկիրը դարձավ սահմանադիր միապետություն: 1909 թ. հունիսի 22-ին անցնելով թուրքական սահմանը՝ Ա-Դոն նույն օրը հասնում է Բայազետ: Այստեղ երկու օր մնալուց, հայ բնակչության թիվը, զբաղմունքները, հարկային համակարգը, տնտեսական և սոցիալական վիճակը ուսումնասիրելուց հետո համեմատում է նոր ու հին բայազետցիների սոցիալ-տնտեսական դրությունը և գալիս է այն եզրակացության, որ վերջիններս իրենց զարգացմամբ 40-ից 50 տարով ետ են մնում[39]*:*

Բայազետից հետո Ա. Դոն լինում է Դիադինում, Վանում, Մուշում, Կարինում և այլ վայրերում, որտեղ մանրամասն հետազոտում է հարկային համակարգը, հայ-քրդական հարաբերությունները, տեղեկություններ է հավաքում հաղորդակցության ուղիների, արհեստագործության, առևտրի, դրամական շրջանառության և այլնի մասին[40]*: Վանում այցելում է Աղթամար կղզի, որտեղ միաբանները ցույց են տալիս մի քար, որը կոչում էին «Բաֆֆու քար»: Ըստ նրանց՝ այդ քարի վրա է Բաֆֆին գրել «Ձայն տուր, ով ծովակ» բանաստեղծությունը*[41]*:*

Օգոստոսի 20-ին Ա-Դոն վերադառնում է Երևան, սկսում է մշակել հավաքած նյութերը, սակայն թողնում է անավարտ, քանի որ սեպտեմբերին Հոգենյարդաբանական ինստիտուտում սկսելու էին դասերը: Գալով Ս. Պետերբուրգ՝ նա շարունակում է ուսումը: Սակայն դեկտեմբերի 18-ին եղբորից նամակ է ստանում այն մասին, որ իր դեմ մեղադրանք է հարուցվել հեղինակած «Ազատագրական շարժումը Ռուսաստանում» գրքի համար[42]*: Ա-Դոն հարկադրված*

---

[37] *Հիմնադիրն է նշանավոր գիտնական, հոգեբույժ, հոգեբան, ակադեմիկոս Վ. Բեխտերևը (1857–1927): 1925 թ. ինստիտուտը կրում է Վ. Բեխտերևի անունը և գործում է առ այսօր: Այժմ կոչվում է* Санкт-Петербургский научно-исследовательский психоневрологический институт им. В. М. Бехтерева.

[38] *Ա-Դ ո. 2015, 124:*

[39] *Ա-Դ ո. 2015, 130:*

[40] *Ա-Դ ո. 2015, 132:*

[41] *Ա-Դ ո. 2015, 289:*

[42] *Ա-Դ օ. 1908:*

է լինում գալ Թիֆլիս, որտեղ դատը հետաձգվում է, քանի որ եղբայրը 500 ռուբլի գրավ էր մուծել: Ուստի նա գնում է Երևան ու շարունակում աշխատել Արևմտյան Հայաստանում հավաքած նյութերի մշակմամբ՝ հրատարակության նախապատրաստելու համար:

Արևմտյան Հայաստանում կատարած ուսումնասիրությամբ Ա-Դոն հսկայածավալ, ահռելի ու անգնահատելի աշխատանք է կատարել[43], սակայն մեկ անձը, որքան էլ նպատակամղված և գործի նվիրյալ լինի, ի զորու չի հավաքել սպառիչ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի հայկական շենների և հայ բնակչության վիճակագրության մասին: Այս հանգամանքի վրա է ուշադրություն դարձրել պատմաբան Գեղամ Բաղալյանն իր հետազոտության մեջ[44]: Այնուամենայնիվ, Ա-Դոյի աշխատությունը կարևոր և լուրջ ուսումնասիրություն է՝ անկախ այնտեղ տեղ գտած որոշ վրիպակների:

Վերադառնալուց հետո Ա-Դոն 1910 թ. մարտի 17-ին Երևանում դատապարտվում է 1 տարի ազատազրկման, և բռնագրավված 987 օրինակ գրքերը ոչնչացվում են: Նա չի համաձայնվում որոշման հետ և վճռաբեկ դատարանին բողոք է ներկայացնում: Պատասխանը ստանալու համար պետք էր սպասել շուրջ երեք ամիս: Այս դադարը նրան հնարավորություն է տալիս երկրորդ անգամ մեկնել Բայազետ և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել:

1910 թ. հուլիսի կեսերին Ա-Դոյին տեղեկացնում են, որ իր բողոքը մերժվել է, և նա պետք է կրի մեկ տարվա բանտարկություն[45]: Նա իր պատիժը կրում է Ախտայի (Հրազդան) գյուղի բանտում, որտեղից շարունակում է հոդվածներ ուղարկել Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» թերթին: 1911 թ. օգոստոսի 4-ին լրանում է Ա-Դոյի մեկամյա բանտարկության ժամկետը, և նա ազատ է արձակվում:

Ազատության մեջ գտնվելով՝ Ա-Դոն սկսում է ուսումնասիրել Երևանի գիմնազիայում Խաչատուր Աբովյանի մասին եղած արխիվը, որն ընդգրկում էր 1843–1848 թթ.: Նա 150 օր[46] ուսումնասիրում է փաստաթղթերը. առանձնապես հետաքրքրում էր Խ. Աբովյանի անհետացման հարցը, սակայն այդ հիմնախնդիրը լուսաբանող որևէ փաստ չի հաջողվում գտնել: Կատարված աշխատանքը հրատարակվում է 1917 թ. «Գործ» ամսագրում[47]:

Առաջին համաշխարհային պատերազմը. Ա-Դոյի գործունեությունը Արևմտյան Հայաստանում և Հյուսիսային Պարսկաստանում

1914 թ. հուլիսի կեսերին Ա-Դոն հանգստանում էր Ղարաքիլիսայում (Կիրովական, Վանաձոր), որը, նրա կարծիքով, Դիլիջանից հետո երկրորդ լավագույն հանգստավայրն էր, երբ տեղեկացավ՝ սկսվել է Համաշխարհային պատերազմը[48]: Ռազմաքաղաքական հակամարտ երկու խմբավորումները՝ Եռյակ, ապա Քառյակ և Անտանտը, կենտրոնացնում են ունեցած ողջ ուժերը, միա-

[43] *Ա-Դ ո. 1912:*

[44] *Բ ա դ ա լ յ ա ն. 2005, 212–220:*

[45] *«Հորիզոն» (Թիֆլիս), 06. VIII. 1909 (տե՛ս Յով. Տէր-Յարութիւնեանցի հոդվածը):*

[46] *Ա-Դ ո. 2015, 178:*

[47] *Տե՛ս Ա-Դ ո. 1917, Բ. մաս, № 5–6, 30–41, № 7–8, 48–69:*

[48] *Ա-Դ ո. 2015, 182:*

ժամանակ կազմակերպում են աշխարհազորային կամավորական ստորաբաժանումներ: Կովկասի փոխարքայությունում նմանապես կազմակերպվում են կամավորական խմբեր կամ դրուժինաներ: Թույլատրվեց արտասահմանից վերադառնալ հետաքննության մեջ գտնվող ՀՅԴ գործիչներին, որոնք ընդգրկվեցին դրուժինաների հրամանատարական կազմի մեջ: Նրանց մի մասին ոգևորել էր այն հանգամանքը՝ կովկասյան իշխանությունները խոստացել էին Արևմտյան Հայաստանին շնորհել ինքնավարությունը, որը, Ա-Դոյի գնահատմամբ, «խաբուսիկ խոստումը նետված էր՝ դյուրահավատ գլուխներն իրենց էլ խաբեցին, մասսաներին էլ»[49]*: Նա վկայակոչում է ՀՅԴ հայտնի գործիչ Ռոստոմի (Ստեփան Զորյան) հետ ունեցած խոսակցությունը: Վերջինս, գալով Կ. Պոլսից, նպատակ ուներ դադարեցնել կամավորական շարժումը: Սակայն համոզվելով, որ անհնար է կանգնեցնել գործընթացը՝ ինքն էլ է լծվում «այդ աշխատանքին»*[50]*:*

Դրոն (Դրաստամատ Կանայան) Ա-Դոյին առաջարկում է ղեկավարել իր հրամանատարության տակ գտնվող II կամավորական դրուժինայի տնտեսական մասը, սակայն մերժում է ստանում, որը հիմնավորում է հետևյալ կերպ. «... մինչև մեր գնդերը ռուսական բանակի հետ օգնության կհասնեն հայ ժողովրդին, տեղի կունենան մասսայական ջարդեր ու թերևս Դուք հանդիպեք հայ ժողովրդի բեկորներին»[51]*: Ա-Դոն նպատակահարմար է համարում իր գործունեությունը ծավալել գաղթականության շրջանում:*

Կարծում ենք, որ անկախ այն հանգամանքից, թե հայերից կկազմվեին կամավորական դրուժինաներ, թե՝ ոչ, Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունը վաղօրոք մշակել էր հայերի ցեղասպանությունը, և կամավորական շարժումը լոկ առիթ էր այն իրագործելու համար: Հետագայում ցեղասպանության զոհ գնացին նաև կայսրության մյուս ազգային փոքրամասնությունները՝ ասորիները, հույները և եզդիները:

Ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունների սկզբում նախաձեռնությունն անցնում է թուրքերին: Սակայն 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5 (4)-ը Սարիղամիշ քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական III բանակը ծանր կորուստներ է կրում և նահանջում:

Թուրքական հարձակման հետևանքով սահմանամերձ շրջանների հայությունը հարկադրված էր լքել բնակավայրերը: Ա-Դոյի վկայությամբ՝ «Գաղթականությունը եկավ որպես հեղեղ ու հեղեղեց Ղարսի (Կարսի – Ռ. Ս.), Կաղզվանի, Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Սուրմալուի, Էջմիածնի, Երևանի և Շարուրի գավառները»[52]*: Այդ օրերին Ա-Դոն գտնվում էր Մարգարա գյուղում, որտեղ կազմակերպվում էր փախստականների դիմավորումը, պարենավորումը և տեղավորումը: Հատկապես ծանր վիճակում էին երեխաները, որոնք ողջ ճանապարհի ընթացքում գտնվել են անձրևի տակ: Ա-Դոյին հիացրել էր Մարգարայի բնակչության վերաբերմունքը գաղթականության նկատմամբ: Գյուղացիների տները բաց էին բոլորի համար, ուշադրություն չէին*

[49] *Ա-Դ ո. 2015, 192:*
[50] *Ա-Դ ո. 2015, 196:*
[51] *Ա-Դ ո. 2015, 198:*
[52] *Ա-Դ ո. 2015, 206:*

դարձնում, որ նրանք ցեխոտ էին ու թրջված, լվանում էին զգեստները և նույնիսկ հարմարություններ ստեղծում լողանալու համար[53]:

Արդեն տեղեկություններ են ստացվում թուրքերի կողմից իրականացվող զանգվածային կոտորածների մասին: Ա-Դոն ջարդերից հրաշքով փրկվածներից մանրամասն փաստեր է հավաքում, արձանագրում և ստուգում: 1915 թ. փետրվարից Վանի նահանգում սկսվում են թուրք-քրդական հարձակումները հայկական բնակավայրերի վրա: Երիտթուրքական իշխանություններն առաջին հերթին հաշվեհարդար են տեսնում հայության ղեկավար կազմի հետ, ինչպես, օրինակ, Շատախում, ապա Վանում: Առաջինում ձերբակալվում են ՀՅԴ անդամ, ուսուցիչ Հովսեփ Զոլոյանն ու նրա հինգ ընկերները, իսկ Վանում նահանգապետ Ջևդեթ բեյը խաբեությամբ հաշվեհարդար է տեսնում ՀՅԴ գործիչներ Վռամյանի (Օնիկ Դերձակյան) ու Իշխանի (Նիկոլ Պողոսյան) հետ:

Նման պայմաններում Վանի հայությունը, մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները, միավորվում և արժանի հակահարված է հասցնում երիտթուրք ոճրագործներին: 1915 թ. մայիսի 4-ին, շնորհիվ վանեցիների հերոսական դիմադրության և ռուսական զորքի ու հայ կամավորների, Վանն ազատվում է թուրք և քուրդ ելուզակներից: Մայիսի 7-ին ռուսական հրամանատարությունն Արամ Մանուկյանին նշանակում է Վանի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ): Վան են շտապում հայ գործիչները, որոնց թվում էր Ա-Դոն[54]:

Վան-Վասպուրականի դիմադրությունը հիրավի ոգևորել էր հայությանը. հատկապես ուրախացնում էր այն հանգամանքը, որ ռուսական հրամանատարությունն Արամին նշանակել էր նահանգապետ: Բոլորին թվում էր, թե իշխանությունները կատարում են իրենց խոստումը, և պետք է սպասել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հռչակմանը: Վանի հայկական իշխանությունն ամբողջովին լծվել էր իր պարտականությունների կատարմանը: Ա-Դոն պարտադիր է համարում այցելել Արամին, երկար զրուցում են, և Ա-Դոյի խոստովանությամբ՝ «Դուրս եկա Արամի մոտից մխիթարված, հայացքս նորից ձգեցի ազատագրված քաղաքի վրա, փողեցին առաջս ավերված թաղերի փլատակները և այդ փլատակների միջից ծագող լուսավոր պատկերներ»[55]: Նրա համար այդ լուսավոր պատկերներն են մարտերի մասնակիցները՝ Սևոն՝ Իսկուհի Համբարձումյանը, Աղավնի Վարպետյանը, 12–14 տարեկան Ասլանը, Ոստանը, Բաբկենը և ուրիշներ:

1915 թ. հունիսի 28-ին Ա-Դոն մի խումբ անձանց հետ մեկնում է նահանգի գյուղերը: Փեսանդաշտում հանդիպում են դիմադրության ղեկավար Լևոն Շաղոյանին, նրանից տեղեկություններ են հավաքում ինքնապաշտպանական մարտերի մասին: Հունիսի 30-ին հասնում են Անդրանիկի զրուժինային, որտեղ տեղեկանում են, որ կամավորները նախորդ օրը պարտության են մատնել թշնամուն՝ որպես ռազմավար վերցնելով չորս թնդանոթ[56]: Վանիկ գյուղում հանդիպում են մյուս զրուժինաների հրամանատարներ Վարդանին, Դրոյին, Քեռուն (Արշակ Գավաֆյան) և Խեչոյին (Խաչատուր Ամիրյան-Գևորգյանց):

[53] *Ա-Դ ո. 2015, 208:*
[54] *Տե՛ս Ս ա հ ա կ յ ա ն. 2012, 233–242, Ս ա հ ա կ ե ա ն. 2012, 407–430:*
[55] *Ա-Դ ո. 2015, 236:*
[56] *Ա-Դ ո. 2015, 240:*

Այս հանդիպումներից բացի, Ա-Դոն ամենայն մանրամասնությամբ փաստագրում է թուրք-քրդական ելուզակների իրականացրած սպանդը և կողոպուտը: Այսպես, գալով Գավաշի գավառ՝ արձանագրում է, որ այցելած ավելի քան 15 գյուղերն[57] ամբողջովին ամայացված էին, բնակչություն չկա:

Ա-Դոն Նիկոլ Աղբալյանի հետ այցելում են Նարեկա վանք, որտեղ գտնվում է Գրիգոր Նարեկացու գերեզմանը: Անվանի գրականագետը սկսում է կարդալ «Նարեկի» գլուխներից մեկը: Ա-Դոյի վկայությամբ, նա ընթերցում էր «այնպիսի ոգևորությամբ և այնպիսի շնչով, որպիսին հատուկ է վեհ գաղափարներով տարված մեկին: Այդ վայրկյանին ամեն ինչ մոռացած՝ նա անէացել էր և ինձ թվաց, որ իմ առաջ կանգնած է միջին դարերի միմիայն հոգեպես ապրող միստիկը»[58]:

Ապա Ա-Դոն այցելում է Հայոց ձորի Հիրճ գյուղ, որտեղ Ջևդեթի հրամանով ապրիլի 3-ին դավադրաբար սպանվել էին Իշխանը և նրա երեք ընկերները[59]:

Ա-Դոյի համար անհասկանալի էր 1915 թ. հուլիսի 14-ի ռուսական զորքի նահանջը: Ռուսական հրամանատարությունը ծրագրել էր առաջանալ Մշո դաշտ, որի համար ստեղծվում է հատուկ ջոկատ՝ գեներալ Իվան Տրուխինի հրամանատարությամբ: Նա առանձնացնում է Զիտայի կազակային գունդը, Հայկական I և II դրուժինաները զորային ավագ Վասիլևի հրամանատարությամբ: Եվ այդ նախապատրաստություններին հետևում է նահանջի հրամանը[60]: Ստեղծված խուճապային պայմաններում Վասպուրականի հայությունը հարկադրված էր գաղթել: Ա-Դոյին, Հակոբ Տեր-Հակոբյանին և Իսահակ Տեր-Ղազարյանին հանձնարարվում է Էջմիածին հասցնել Աղթամարի՝ շուրջ 200-ի հասնող ձեռագրերը, որը նրանք հաջողությամբ կատարում են:

Ա-Դոն հրատարակում է հատուկ ուսումնասիրություն՝ նվիրված Վանի հայության ինքնապաշտպանությանը, որը հիմնված է անձնական փաստահավաք տվյալների և Վանի նահանգապետարանի արխիվից քաղած փաստաթղթերի հիման վրա[61]:

Ա-Դոյի գործունեության համար 1916 թ. դառնում է որոշակի դաղարի ժամանակահատված: Նա սկսում է հրատարակության պատրաստել Վանում հավաքած նյութերը: Ավարտելուց հետո գիրքը («Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թուականներին») հանձնում է «Արարատ» դրախանությանը, որն ուներ իր տպարանը: Մի պայմանով, որ իրեն օրինակներ տրվեն աշխատությունից:

1916 թ. հունվարի 18-ին «Երևան է ժամանում ռուս լավագույն մարդկանցից մեկը՝ Վալերի Բրյուսովը»[62], որը դասախոսում է հայ բանաստեղծության

---

[57] *Ա-Դ ո. 2015, 247:*

[58] *Ա-Դ ո. 2015, 249:*

[59] *Ա-Դոն հետաքննում է Իշխանի և երեք ուղեկիցների՝ Պողոս Թութունջյանի (Քոթոթ Պողոս), Միհրան Տեր-Մարգարյանի ու Վահան Խռանյանի դավադիր սպանությունը (Ս ա հ ա կ յ ա ն. 2017, 3–20):*

[60] *Վանի նահանջի մասին ավելի մանրամասն տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն - յ ա ն. 2002, 46–58, Ս ա հ ա կ յ ա ն. 2015, 82–88:*

[61] *Ա-Դ օ. 1917:*

[62] *Ա-Դ ո. 2015, 338:*

մասին: Նշանավոր գրողի ժամանումը հատկանշական էր, քանի որ հայությունը գտնվում էր հոգեկան ծանր վիճակում[63]: Վ. Բրյուսովի դասախոսությունը տևում է երեք ժամ, որն ավարտում է հետևյալ խոսքով. «Շատ ծանր փոթորիկներ են եկել ու անցել, բայց դու (հայ ժողովուրդը – Ռ. Ս.) տարել ես, այս փոթորիկն էլ կանցնի, հավատացած եմ ես, այս էլ կտանես: Հավաքիր ուժերդ, տար եռանդուն աշխատանք և այս նոր վերքդ կբուժվի, կմոռացվի»[64]:

Ռուսական երկրորդ հեղափոխությունը. Ա-Դոյի գործունեությունը Կարմիր խաչի ջոկատում

1917 թ. հունվարի 1-ին Էջմիածնում գտնվող «Ազգագրական հանձնաժողովը», որի նախագահը Գարեգին ծայրագույն վարդապետ Հովսեփյանն էր, իսկ քարտուղարը՝ պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, Ա-Դոյին առաջարկում են համատեղ աշխատել «Վշտապատում» վերնագրով ժողովածուի վրա: Երկու շաբաթ անց մեկ այլ առաջարկ է արվում ռուսական Կարմիր խաչի Պետրոգրադի ջոկատի կովկասյան կայանների լիազոր Սիրական Տիգրանյանի կողմից: Նա առաջարկում է միասին մեկնել Սալմաստ և ուսումնասիրել գաղթականության թիվը, կենցաղը, կարիքներն ու այլն: Ա-Դոն ընտրում է վերջին առաջարկը, քանի որ ցանկանում էր լինել Պարսկաստանում, ծանոթանալ տեղի իրականության հետ և այցելել Ռաֆֆու հետ կապված վայրերը:

1917 թ. փետրվարի 23-ին՝ Համաշխարհային պատերազմի եռուն շրջանում, Ռուսաստանում տեղի է ունենում բուրժուադեմոկրատական հեղափոխություն: Մարտի 3-ին ռուս քաղաքական, պետական և ռազմական գործիչները ստիպում են Նիկոլայ II-ին հրաժարական տալ: Իշխանությունն անցնում է Ժամանակավոր կառավարությանը՝ իշխան Գեորգի Լվովի նախագահությամբ: Ոչ այս, ո՛չ էլ Ալեքսանդր Կերենսկու գլխավորած կառավարություններն ի զորու չեղան լուծել պետության առջև ծառացած հիմնախնդիրները և հեռացան պատմության ասպարեզից՝ իրենց տեղը զիջելով բոլշևիկներին: Վերջիններիս առաջնորդ և Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների նախագահ Վլադիմիր Լենինի (Ուլյանով) առաջարկությամբ ընդունված «Խաղաղության և հողի մասին» երկու դեկրետները կազմալուծեցին ռուս-թուրքական ռազմաճակատը: Ռուսական զորքը սկսեց զանգվածաբար լքել ռազմաթատերաբեմն ու հեռանալ հայրենիք: Անցնելով Երևանով՝ զինծառայողների որոշ մասը զբաղվում էր հատկապես ոգելից խմիչքների կողոպուտով, որոնցից մեկի ժամանակ՝ դեկտեմբերի կեսերին, շուկայում հրդեհ է բռնկվում: Ա-Դոյի ընորոշմամբ՝ «այս հրդեհը կարծես հանդիսացավ գալիք աղետների ազդանշան»[65]:

1917 թ. ապրիլի 12-ին Ա-Դոն և Պետրոգրադի ջոկատի Սալմաստ գավառի կայանի դպրոցի տեսուչ Հակոբ Տեր-Հակոբյանը ճանապարհվում են Պարսկաստան: Լինում են Թավրիզում, իսկ ապրիլի 17-ին հասնում են Սալմաստ

---

[63] *Հովհ. Թումանյանի գնահատմամբ՝ «Նա (Վ. Բրյուսովը – Ռ. Ս.) Հայոց բանաստեղծությունը անանում է հայ ազգի ազնվականության վկայական» («Հորիզոն», 12. I. 2016): Հայ իրականության հետ Վ. Բրյուսովի առնչությունների մասին մանրամասն տե՛ս* Закарян. 2016.

[64] *Ա-Դո. 2015, 340:*

[65] *Ա-Դո. 2015, 345:*

գավառի կայան, որի կենտրոնը Կալասար գյուղն[66] էր: Ա-Դոն անմիջապես սկսում է իր ուսումնասիրությունները: Լինում է Սալմաստում, որտեղ նաև ապաստան էին գտել Ջուլամերիկի ասորիները: Հայությունը բավականին տուժել էր: Սալմաստում կար հայկական 23 գյուղ, որոնցից 5-ը զուտ հայաբնակ էին, իսկ 18-ում հայերի հետ բնակվում էին պարսիկներ ու ասորիներ[67]: Միաժամանակ ուսումնասիրում է հարկահանության տեսակները, ինչպես նաև մինչև պատերազմը պանդխտության գնացած հայերի թիվը: Ա-Դոն արձանագրում է, որ արտագնա աշխատանքից բերված գումարների շնորհիվ «Սալմաստի հայ ժողովուրդն անցյալում ունեցել է համեմատաբար լավ վիճակ, եղել է բարեկեցիկ»[68]:

Ա-Դոն բաց չի թողնում հնարավորությունն այցելելու մեծանուն գրող Րաֆֆու ծննդավայրը՝ Փայջուկ գյուղ: Նա ոչ միայն կազմում է գրողի տան հատակագիծը, այլև մանրամասն նկարագրում է չինությունը, որը, նրա կարծիքով, գյուղի լավագույն տունն է: Ա-Դոյին հետաքրքրում է նաև մեկ այլ շեն՝ Սավրան, որտեղից էին Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի երկու գլխավոր գործող անձինք՝ Քավոր Պետրոսը և Մուրադը:

Ա-Դոն այցելում է ասորիների կենտրոն Ջուլամերիկը, ուսումնասիրում նրանց կենցաղը և սովորույթները[69]: Հանդիպում է ասորիների հոգևոր առաջնորդ, Արևելքի ասորական եկեղեցու պատրիարք Մար Բենիամին Շիմուն XXI-ին: Նշում է, որ նրա քույրը՝ Սուրմա խանումը, մեծ ազդեցություն ուներ եղբոր վրա և շատ հարցեր լուծում էր ինքնուրույն, առանց պատրիարքի: Ա-Դոն նկատում է, որ Սուրմա խանումի անգլերենի ուսուցիչն անգլիացի միսիոներ, դոկտոր Բրաունն է[70]:

1917 թ. մայիսին Ա-Դոն մեկնում է Աղբակի գավառ, այցելում է Սբ. Բարդուղիմոսի վանք[71], իր պարտքն է համարում նաև լինել պարսկաթուրքական սահմանին գտնվող Դերիկի Սբ. Աստվածածին վանքում, որի վանահայրը Բագրատ վարդապետ Թավաքալյանն էր: Վանքը եղել է հայդուկային հենակետ:

---

[66] Կալասար գյուղը XX դարասկզբին ուներ 500-ից ավելի հայ բնակիչ: Գյուղում կային Սբ. Սարգիս եկեղեցի, Րաֆֆու անվան երկդասյա դպրոց, Գ. Արծրունու անվան գրադարան: Եղել է գրչության կենտրոն, այժմ ամայի է:

[67] Ա-Դ ո. 2015, 281:

[68] Ա-Դ ո. 2015, 286:

[69] Ա-Դոյի հիշողությունների այս հատվածը տե՛ս Գ ա ս պ ա ր յ ա ն, Ս ա հ ա կ յ ա ն. 2013, 13–32:

[70] Ա-Դ ո. 2015, 296:

[71] 1915 թ. ապրիլի 2-ին գեներալ Թովմաս Նազարբեկյանի Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադն ու հայ կամավորական II դրուժինան հասնում են Սբ. Բարդուղիմեոս, որտեղ գտնվում է Հիսուսի աշակերտ և I դարում Հայաստանում քրիստոնեության քարոզիչ Սբ. Բարդուղիմեոսի դամբարանը: Այն կիսով չափ բացված է. դա եղել է քուրդ կողոպտիչների ձեռքի գործը: Երբ նրանք հոգնել են և ցանկացել են ջուր խմել Մեծ Զաբ գետից, «նրանցից մեկը սկսել է խմել, անսպասելիորեն իրեն վատ է զգացել ու տեղնուտեղը մահացել է, որից հետո մյուսները սարսափած փախել էին վանքից» (տե՛ս Ս ա հ ա կ յ ա ն. 2019, 318):

Ա-Դոն հասնում է նաև նշանավոր Խանասորի դաշտ, որտեղ, Վարդանի գլխավորությամբ, հայդուկները հարձակվել էին քրդական մազրիկ ցեղի վրա՝ վրեժխնդիր լինելու հայերի կոտորածի համար, որոնք 1896 թ. հունիսի 20–24-ը հարձակվել էին Վանից Պարսկաստան նահանջող, հիմնականում անզեն 700-ից ավելի հայերի վրա ու մեծ մասին կոտորել Գարահիսարի լեռնանցքում և Սբ. Բարդուղիմեոսի վանքի մոտ:

Պատերազմի հետևանքով Աղբակի 27 բնակավայրերից մնացել էր միայն 7 գյուղ, որտեղ հայեր էին ապրում[72]: Ողջ ճանապարհորդության ընթացքում Ա-Դոն ականատես է լինում թուրք-քրդական ավերածություններին և գազանություններին: Ռուսական զորքի հաղթանակները հարկադրում են 1890-ական թվականներին «քրդացած» հայերին վերստին վերադառնալ իրենց ազգային պատկանելիությանն ու կրոնին[73]: Նրանց թվում կային նաև քրդեր, որոնք նման քայլի են դիմում, որպեսզի կարողանան նպաստ ստանալ[74]:

Ավարտելով իր ուսումնասիրությունները Հյուսիսային Պարսկաստանում՝ Ա-Դոն 1917 թ. հունիսի 6-ին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հետ ճանապարհվում է Վան. լինում են Խոյում, Սարայում և հունիսի 12-ին հասնում Վան:

Մինչ այդ Ա-Դոն Վանում եղել էր երկու անգամ՝ 1909 և 1915 թթ.: Այս անգամ պատկերն այլ էր: Վասպուրականը գրեթե դատարկվել էր հայերից: Բնակչության 70-ից 80 %-ը գտնվում էր ծննդավայրից դուրս: Ուրախալին այն էր՝ կազմվել էր Վանի օկրուգ, որը գլխավորում էր կոմիսար Կոստանդին (Կոստյա) Համբարձումյանը: Նրա հետ Ա-Դոն առաջին անգամ հանդիպել էր Գորիսում 1906 թ.՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, երբ Կ. Համբարձումյանը ղեկավարում է Սյունիքի հայության ինքնապաշտպանությունը[75]:

Ա-Դոն Վանում մնում է հինգ օր, որի ընթացքում տեղացիներից տեղեկություններ է հավաքում Վասպուրականի մի շարք գավառների և քրդական ցեղերի մասին: 1917 թ. հունիսի 17-ին ճանապարհվում է Երևան:

Սարդարապատի ճակատամարտը և Հայաստանի Հանրապետության հռչակումը

Ստեղծված պայմաններում հայությունը սկսում է կազմակերպել իր զինված կազմավորումները: Օսմանյան կայսրությունը, օգտվելով խառնիճաղանջ իրադրությունից, 1918 թ. փետրվարին անցնում է հարձակման: Հայկական նորակազմ ռազմական կազմավորումները դժվարությամբ են դիմադրում թշնամուն: Մայիսի 26-ին, Ա-Դոյի ընորոշմամբ, «տեղի ունեցավ Սեյմի անճանապանության ակտը»[76]: Վրաստանի Ազգային խորհուրդը հայտարարեց անկախ հանրապետություն: Մեկ օր անց նմանատիպ հայտարարությամբ հանդես եկավ Ադրբեջանը: Մայիսի 30-ին ստեղծված պայմաններում հայ

[72] *Ա-Դ ո. 2015, 308:*
[73] *Ա-Դ ո. 2015, 312–315:*
[74] *Ա-Դ ո. 2015, 315:*
[75] *Ա-Դ ո. 2015, 323:*
[76] *Ա-Դ ո. 2015, 361:*

ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն ու միակ իշխանությունը[77]:

Ա-Դոն այցելում է Կարսի ամրոց, որտեղ ամենայն մանրամասնությամբ ծանոթանում է կառուցվածքին, կրակակետերի դասավորությանը, ստորգետնյա ապաստարանների և այլնի: Ինքնին հասկանալի է, որ Ա-Դոն վստահելի մարդ էր, որը երբեք հակառակորդին չէր հայտնի իր տեսածների մանրամասնությունները, սակայն, կարծում ենք, որ չէր կարելի քաղաքացիական անձնավորությանը նման հնարավորություն տալ: Այս օրինակը վկայում է, թե ինչպիսի «լուրջ» փոփոխություններ են տեղի ունեցել բանակում: Սա հետևանք էր 1917 թ. Փետրվարյան հեղափոխության, երբ Ժամանակավոր կառավարությունն իր մի շարք «ժողովրդավարական» օրենքներով քայքայեց ռուսական բանակն ու նավատորմը:

Ա-Դոն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ամրոցի սպառազինության և կայազորի մասին[78]: *Ցավոք, 1918 թ. ապրիլի 12-ին Անդրկովկասյան կառավարության նախագահ Ակակի Չխենկելու և զինվորական նախարարի պաշտոնակատար, գեներալ Իլյա Օդիշելիձեի հրամանով Կարսը, որի վրա մեծ հույսեր էին դրված, հանձնվում է թուրքերին: Վերջիններս, արբեցած իրենց համար անակնկալ հաջողությունից, զարգացնում են հարձակումը Երևանի և Ղարաքիլիսայի ուղղություններով: Թշնամուն օգնության են շտապում թուրքական նոր զորամասերն ու քրդական ավազակախմբերը: Հայությունը սկսեց հեռանալ Կողբից, Սուրմալուից, Սարդարապատից, Թալինից և այլ վայրերից: Ա-Դոն արձանագրում է. «Մի քանի հարյուր հազար տաճկական հայության արյան գետերով չհագեցված տաճիկ պետությունը նոր վազք էր տալիս իր դիվային ծրագրին»*[79]:

Կարսից նահանջած հայկական զորքը տեղակայվում է Ալեքսանդրապոլում, ամրոցում, շրջակա գյուղերում: Ա-Դոն նշում է թուրքական «փափուկ» դիվանագիտության գործելակերպերից մեկը՝ հակառակորդի զինվորներն այս կամ այն պատրվակով գալիս են Ալեքսանդրապոլ առանց որևէ թշնամություն ցուցաբերելու: Այս և այլ կերպ «բարեկամական» վերաբերմունք ցուցաբերելով՝ «հետզհետե համոզմունք էին առաջացնում, որ նոր հարձակում չի լինի»[80]:

Կարսից նահանջած և Ալեքսանդրապոլում ու շրջակայքում գտնվող հայկական զորքը հայտնվում է հոգեբանական ծանր վիճակում: Հրամանատարության թույլ լինելու պատճառով դասալքություն է սկսվում. 16 հազար զորքից մնում է շուրջ 7 հազարը[81]: *Մայիսի 15-ին թուրքական զորքը հրետանակոծությունից հետո անցնում է հարձակման և գրավում Ալեքսանդրապոլը:*

Իր «Հայության երկունքը» աշխատության մեջ Ա-Դոն առավել մանրամասնությամբ լուսաբանում է 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը, դրանց կազմակերպումն ու ընթացքը: Այդ նպատակի համար նա օգտագործում է ոչ միայն ժամանակի մամուլը և Հայկական կորպուսի արխիվը, այլև իր անձ-

---

[77] *Ա-Դ ո. 2015, 362:*
[78] *Ա-Դ ո. 2015, 365:*
[79] *Ա-Դ ո. 2015, 388:*
[80] *Ա-Դ ո. 2019, 341:*
[81] *Ա-Դ ո. 2019, 342:*

նական դիտարկումները: Սարդարապատի և Բաշ Ապարանի հերոսամարտերի «ճարտարապետներ»՝ գեներալ Մովսես Սիլիկյանին, Դրոյին և գնդապետ Դանիել բեկ Փիրումյանին անվանում է «սուրբ երրորդություն»[82]: Ա-Դոն Սարդարապատի և Բաշ Ապարանի հաղթանակների գրականը համարում է համաժողովրդական պայքարը:

Ա-Դոն ցավով արձանագրում է, որ, չնայած վերը նշված երկու հաղթանակներին, հայկական բանակը պարտություն կրեց Ղարաքիլիսայում[83]: Քննելով պարտության պատճառները՝ նա վեր է հանում մի շարք սխալներ, որոնք թույլ տրվեցին հրամանատարության և իշխանությունների կողմից՝ 1. տեղի բնակչության մեծ մասը չաջակցեց բանակին, այլ ցանկություն հայտնեց հպատակվել թուրքերին: 2. Ղարաքիլիսայում էին գտնվում 2 հազարից ավելի թուրք ռազմագերիներ, որոնց, որպես «բարի» կամքի արտահայտություն, ազատ արձակեցին. վերջիններս համալրեցին թուրքական բանակի շարքերը: 3. Դիլիջանում գտնվող կորպուսի շտաբը հավատաց ստացված տեղեկությանը, թե թուրքերը մայիսի 22-ին գրավել են Ղարաքիլիսան, որը իրականությանը չէր համապատասխանում: 4. Չկարողացան սաստել ու արգելել տեղի թաթար բնակչությանը, որը կազմելով զինված հրոսակախմբեր՝ ապակայունացնում էր թիկունքը և այլն[84]:

Խուճապը համակել էր բոլորին: Դասալքությունը զանգվածային էր: Մայիսի 30-ին Անդրանիկի զորամասի հետ Դիլիջան հասած նրա վաշտի հրամանատար, կապիտան Միքայել Իշլեմեջյանը հետևյալ պատկերն է ներկայացնում. «Փողոցներում թափված էին փամփուշտներ արկղերով, հրացաններ ամեն տեսակ, թնդանոթներ, թնդանոթի կառքեր, պահեստների դռները խորտակված, էլ ինչեր, ինչեր»[85]:

Չնայած Սարդարապատում և Բաշ Ապարանում տարած հաղթանակներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկադրված էր հունիսի 4-ին Բաթումիում թուրքերի հետ կնքել հաշտության պայմանագիր: Այդ մասին տեղեկանալով՝ Երևանում սկսում են զանգվածային ցույցեր, որոնց միանում են Արարատյան դաշտի բնակիչները: Ըստ Ա-Դոյի՝ հունիսի 9-ին Ղամարլուի (Արտաշատի) Ազգային խորհուրդը Երևան ուղարկեց 3 հազար զինվոր ու սպա: Ա-Դոն վկայում է. «Մոտենում է զորքը կանոնավոր ու միաքայլ: ...Գալիս է նախ զորքի առաջնորդը՝ մի սպա ձիու վրա: Նրա ետևից շարժվում է առաջին վաշտը: Վաշտի առջևից գնում են մեկ երիտասարդ սպա, մեկ դրոշակակիր զինվոր և երկու օրիորդներ ...Դրանք վիրակապ քույրերն են: Գալիս են չորսական շարքերով զինվորները ...: Գալիս են շարքերը լուռ, խոհուն դեմքերով, հաստատուն քայլերով, գալիս են զորական շարքերը երկար ու երկար»[86]: Ցավոք, արդեն ուշ էր:

Տեղեկանալով Բաքվում ընթացող օրհասական պայքարի մասին՝ Ա-Դոն փորձում է մեկնել այնտեղ, սակայն հակասական տեղեկությունները հարկա-

[82] Ա-Դ ո. 2019, 369:

[83] Ճակատամարտի օրերին Անդրանիկի դիրքորոշումը տե՛ս Հայոց պատմություն. 2015, 651–652:

[84] Ա-Դ ո. 2019, 395:

[85] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 10, թ. 48:

[86] Ա-Դ ո. 2019, 457:

դրում են նրան հրաժարվել իր մտադրությունից: Սեպտեմբերի 15-ին թշնամին կարողացավ գրավել Բաքուն և իրականացնել շուրջ 30 հազար հայերի կոտորած: Ա-Դոն բարձր է գնահատում Բաքվի դիմադրությունը թուրք-թաթարական զորքերին: Նրա գնահատմամբ՝ «Բաքուն հանդիսացավ Անդրկովկասի միջնաբերդը, միջնաբերդ՝ իր հեղափոխական կոչումով»[87]:

Հունիսի 4-ին Բաթումիում չարաբաստիկ հաշտությունն արդեն կնքված էր, սակայն Արարատյան դաշտի բնակչությունը, որը հրաժարվել էր լքել բնակավայրը, դիմադրավում էր թուրքերին՝ հրաժարվելով նրանց ենթարկվել: Որպես օրինակ՝ Ա-Դոն վկայակոչում է հուլիսի 14-ին Զիդամլուի (Ազատավան) գյուղացիների հերոսական պայքարը[88]: Հակառակորդին համառ դիմադրություն ցույց տվեցին նաև Նովրուզլու[89] և Դարղալու (Այգեզարդ)[90] գյուղերը: Այնուամենայնիվ, ուժերն անհավասար էին: Թուրքական հրամանատարությունը Ղամարլուի հայության դեմ նետեց կանոնավոր բանակ, որը զինված էր թնդանոթներով ու գնդացիրներով, ուստի հայերը մեկօրյա դիմադրությունից հետո հարկադրված էին փախչել. նրանք զգալի կորուստներ ունեցան, երբ անցնում էին Ազատ գետը: Շատերը, այդ թվում՝ երեխաներ, խեղդվեցին կամ գնդակահարվեցին թուրք զինվորների կողմից[91]: Ա-Դոն ցավով արձանագրում է. «Ղամարլուն դիմադրության մեջ մենակ մնաց: Հայ զորքերի հրամանատարությունը և Երևանի ազգային խորհուրդը ... խոստացած օգնությունը չհասցրին, բավականացան ... բողոքի հեռագիր ուղղելով ... (թուրքերին – Ռ. Ս.)»[92]:

... Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թիֆլիսում գործող Հայ հայրենակցական միությունների կենտրոնական միությունը, որը գլխավորում է հայ մեծանուն գրող և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը, ով ստանձնում է 1918 թ. վերջերին ստեղծված «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննող հանձնաժողովի» ղեկավարությունը, կազմված էր չորս բաժնից՝ պատմաքաղաքական, ռազմապատմական, տնտեսական, քրեական: Որոշում է հետաքննել թուրքական վայրագությունները, ինչպես նաև պատրաստել մի ուսումնասիրություն, որում ներկայացված կլինի ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորական խմբերի մասնակցությունը մարտական գործողություններին, արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները:

Դեկտեմբերի սկզբին Ա-Դոն ՀՀ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանից ստանում է պաշտոնական առաջարկ՝ մասնակցելու հանձնաժողովի աշխատանքներին, որը պետք է ապահովեր հայ բնակչության ունեցած մարդկային ու գույքային կորուստները: 1919 թ. հունվարի սկզբին Ա-Դոն մեկնում է Թիֆլիս և հանդիպում հանձնաժողովի անդամ գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հետ, սակայն նպատակահարմար չի գտնում մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

---

[87] Ա-Դ ո. 2019, 552:
[88] Ա-Դ ո. 2019, 469:
[89] Այժմ Արատաշատ քաղաքի թաղամաս:
[90] Ա-Դ ո. 2019, 477:
[91] Ա-Դ ո. 2019, 478:
[92] Ա-Դ ո. 2019, 478:

Ա-Դոն անդրադառնում է մի կնճռոտ հարցի՝ հայ-վրացական պատերազմին, որի համար առիթ էր Հարավային Լոռին, որտեղից հեռացել էին Համաշխարհային պատերազմում պարտություն կրած թուրքական զորքերը: Մարտական գործողությունները սկսվեցին 1918 թ. դեկտեմբերի 11– 12-ը և շարունակվեցին մինչև դեկտեմբերի 28-ը[93]: Ա-Դոն առաջին հերթին նշում է Ախալցխայի, Ախալքալաքի և Նուխիի փախստականների հիմնախնդիրը, որոնց օգնելու փոխարեն վրացական կառավարությունը թողեց բախտի քմահաճույքին: Դրա հետևանքով հայերը հայտնվում են ծանր վիճակում՝ զրկված լինելով սննդից ու բժշկական օգնությունից: Փախստականներից շատերը մահացան ցրտից, սովից ու համաճարակային հիվանդություններից:

Հայ-վրացական պատերազմի ժամանակ վրացական իշխանությունները վրացահպատակ հայերի նկատմամբ, բառիս բուն իմաստով, «որս էին հայտարարել». զինապարտ հայերը համարվեցին ռազմագերիներ: Ա-Դոյի բնորոշմամբ՝ նման գործողությունները հիշեցնում էին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարված բռնությունները[94]:

Ա-Դոն իր գրքում անդրադառնում է կարևոր մի իրադարձության. 1920 թ. հունվարի 19-ին Ալեքսանդրապոլում դրվում է Հայկական Համալսարանի հիմքը: Նաև նշում է՝ դրա հետ շարունակվում էին Ադրբեջանի կողմից մարտական գործողություններն Արցախում և Սյունիքում, որոնք ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են Ա-Դոյի կողմից[95]: Իրավիճակն էլ ավելի է սրվում, երբ Ադրբեջանը «հռչակվում» է խորհրդային, որից հետո ՀՀ կառավարությունը ստանում է երկու վերջնագիր, որտեղ պահանջվում էր դուրս բերել հայկական զորքն Արցախից և Սյունիքից: Ա-Դոյի կարծիքով՝ «նրանց դիմումը հայ կառավարությանը ոչնչով չէր տարբերվում նախկին մուսավաթական կառավարության դիմումներից իր ոճով և իր տոնով»[96]: Հայ ժողովրդի համոզմամբ՝ «սա նույն մուսավաթական կառավարությունն է՝ կոմունիստական դիմակ հագած»[97]:

Ա-Դոն ոչ հատուկ խորությամբ է անդրադառնում հայ բոլշևիկների կազմակերպած 1920 թ. Մայիսյան ապստամբությանը և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը: Վերջինս նա համարում է «երկունքի լուծում»[98]:

1919 թ. հիմնվում է Հայաստանի սպառողական ընկերությունների միությունը (Հայկոոպ), որտեղ Ա-Դոն աշխատանքի է անցնում և ծառայում մինչև 1949 թ.՝ վարելով վիճակագրական բաժնի վարիչի պաշտոնը[99]:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի զգալի մասերում հաստատվում են խորհրդային կարգեր, իսկ Սյունիքում, Գարեգին Նժդեհի գլխավորությամբ, շարունակվում էր պայքարը բոլշևիկյան ուժերի դեմ: 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո խորհրդային իշխանությունները փորձում

[93] Մանրամասն տե՛ս Հայոց պատմություն. 2010, 116–125, Սարգարյան. 2002, Վիրաբյան. 2016:
[94] Ա-Դո. 2019, 629:
[95] Ա-Դո. 2019, 676–688:
[96] Ա-Դո. 2019, 689:
[97] Ա-Դո. 2019, 699–690:
[98] Ա-Դո. 2019, 6–7:
[99] ՀԱԱ, ֆ. 41, ց. 1, գ. 1, թ. 4:

են համոզել և բանակցությունների ճանապարհով հարկադրել Լեռնահայաստանին հրաժարվել զինված պայքարից: Այդ նպատակով Սյունիք է ուղևորվում պատվիրակություն, որի կազմում էին գրականագետ, պատմաբան Արտաշես Կարինյանը, հայ հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Դավիթ Անանունը, Ա-Դոն և այլք, որոնց նպատակն էր՝ համոզել ապստամբներին դադարեցնել դիմադրությունը:

Զանգեզուրի ինքնապաշտպանության մասնակիցների հետ հանդիպման ժամանակ Ա-Դոն «լուռ էր և իրեն զգույշ էր պահում», սակայն վստահելի մարդկանց զգուշացնում էր չհավատալ բոլշևիկ քարոզիչների կեղծ հավաստիացումներին. «Սուտ են խօսում, մի՛ հաւատաք, խաբում են»[100]: Հանդիպման վերջում խոստանում է Սյունիքում պայքարողների ընտանիքներին հանձնել տրված օգնությունը[101]:

Եզրակացություն

XIX դարավերջի և XX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական գործիչ, գիտնական Ա-Դոն ականատես է եղել Ռուսական հեղափոխությանը (1905–1907 թթ.), հայ-թաթարական ընդհարումներին (1905–1906 թթ.), Արևմտյան Հայաստանում վիճակագրական տեղեկություններ է հավաքել հայերի թվաքանակի, արհեստների, գյուղատնտեսության, թուրքական հարկային համակարգի և այլնի մասին: Նա Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զբաղվել է Օսմանյան կայսրության կողմից կազմակերպած ցեղասպանությունից փրկված փախստականների օգնության տրամադրմամբ: Վանի հայության հաղթական ինքնապաշտպանությունից (1915 թ. ապրիլ–մայիս) հետո մեկնել է Վասպուրական, որտեղ տեղեկություններ է հավաքել հայերի՝ թուրքերի և քրդերի կողմից կոտորածի ու դիմադրության մասին, իսկ 1917 թ. եղել է Հյուսիսային Պարսկաստանի հայկական գյուղերում և հավաքագրել ոչ միայն հայերի, այլև ասորիների մասին:

Ա-Դոյի ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությունը սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Նա այն եզակի հետազոտողներից է, ով անձամբ է եղել դեպքերի և իրադարձությունների վայրերում, օգտագործել է ոչ միայն ժամանակի պարբերական մամուլը, արխիվային փաստաթղթերը, այլև անձնական հուշագրությունները, որոնք էլ ավելի են արժեքավորել նրա աշխատությունները:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: Հեղինակ է 10 գրքի, փաստաթղթերի նյութերի ժողովածուների և շուրջ 100 հոդվածի: rubensahakyan58@gmail.com

---

[100] *Սարգսեան. 1952, 92:*
[101] *Սարգսեան. 1952, 93:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դո. 1903, Մակեդոնիա, Ս. Պետերբուրգ, «Պուշկինեան արագատիպ» տպարան, 22 էջ:

Ա-Դո. 1907, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թ.), Երևան, տպարան Այվազեանց ու Նազարեանց, 464 էջ:

Ա-Դո. 1908, Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից, Երևան, տպարան «Լոյս», Արշակ Յակովբեանցի և որդիք, 300 էջ:

Ա-Դո. 1912, Վանի, Բիթլիսի եւ էրզրումի վիլայեթները. Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական և տնտեսական դրութեան, Երևան, տպարան «Կուլտուրա», 406 էջ:

Ա-Դո. 1917, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թւականներին, Երևան, տպարան «Լոյս», 488 էջ, 23 նկարներով և 8 մի գոյնի քարտէզներով:

Ա-Դо. 1917, Խ. Աբովեանի կեանքի վերջին տարիները. – «Գործ» (Բագու), Բ. մաս, № 5–6, էջ 30–41, № 7–8, էջ 48–69:

Ա-Դո. 2013, Ռուսական ցարերը և հայկական հարցը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ. գ. թ. Ռ. Գասպարյանի և պ. գ. թ. Ռ. Սահակյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 161 էջ:

Ա-Դо. 2015, Իմ հիշողությունները. առաջաբանը և ծանոթագրությունները Ռուբեն Գասպարյանի և Ռուբեն Սահակյանի, Երևան, «Վարդան Մկրտչյան» տպագրատուն, 507 էջ:

Ա-Դо (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես). 2019, Հայության երկունքը, հրատ. պատր.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 765 էջ:

Բաղալյան Գ. 2005, Վարազդատ Տերոյանի վիճակագրական նյութերն Արևմտյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 212–220:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2013, Ա-Դոյի ընտանեկան արխիվից. Ջուլամերիկների ասորիները. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 13–32:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2015, № 16, Ա-Դոյի անտիպ արխիվից. Գրիգոր Արծրունի. – «Հանդես» (գիտամեթոդական հոդվածների ժողովածու), էջ 215–221:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2015, № 3, Մար-ի նորահայտ հուշերը. – «Վէմ», էջ 197–233:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2017, Ա-Դոյի հուշերը Օսմանյան մեջլիսի պատգամավոր Արշակ Վռամյանի սպանության մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 125, էջ 3–20:

Զաքարյան Ա. 2002, Նորահայտ փաստաթղթեր Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած քննիչ հանձնաժողովի» գործունեության մասին. – ՊԲՀ, № 2, էջ 106–122:

Զաքարյան Ա. 2002, Գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի մասնակցությունը Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասի քննիչ հանձնաժողովի աշխատանքներին. – «Հայկական բանակ», № 1–2, էջ 155–158:

Խուդինյան Գ. 2006, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, հրատ. ՀՅ Դաշնակցության, 440 էջ:

Կոստանդյան Է. 2000, Մկրտիչ Խրիմյան. Հասարակական-քաղաքական գործունեությունը. Երևան, Զանգակ -97 հրատ., 448 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 314, g. 1, գ. 21, թ. 54, ֆ. 402, g. 1, գ. 10, թ. 48, ֆ. 402, g. 2, գ. 10, թ. 3:

Հայոց պատմություն. 2015, h. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918). գիրք II (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX սկզբին), Երևան, «Զանգակ», 760 էջ + 32 էջ ներդիր:

Հայոց պատմություն. 2010, h. 4, Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.). գիրք I, Երևան, «Զանգակ», 800 էջ + 24 էջ ներդիր:

Հարությունյան Ա. 2002, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 46–58:

«Հորիզոն» (Թիֆլիս), 06. VIII. 1909 (Յով. Տէր-Յարութիւնեանց. Կօօպերացիայի պահանջը մեզանում), 12. I. 1916:

Նահապետյան Ս. 2011, Փաստաթղթեր Նոր-Բայազետ քաղաքի հիմնադրման և հայոց ծխական երկդասյան ուսումնարանի պատմության մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, էջ 6–21:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, Ե. հատոր, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեանը, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, Պէյրութ, 528 էջ:

Սահակյան Ռ. 2012, Հաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից). – ՊԲՀ, № 1, էջ 233–242:

Սահակեան Ռ. 2012, Վանի նահանգապետութեան պատմութիւնից (յունիս 14-յուլիս 7–յուլիս 25, 1915) եւ Ա-Դօն. – «Հայկազեան Հայագիտական Հանդէս» (Պէյրութ), № 32, էջ 407–430:

Սահակյան Ռ. 2015, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար), Երևան, Պատմության ինստիտուտ, 428 էջ:

Սահակյան Ռ. 2017, Ա-Դոյի հուշերը Օսմանյան մեջլիսի պատգամավոր Արշակ Վռամյանի սպանության մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 125, էջ 3–20:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը. – «Վէմ», № 2, էջ 292–328:

Սարգսեան Ե. 1952, Ադօ (Յովհաննէս Տէր Մարտիրոսեան). – «Հայրենիք» (Բոստոն), № 4, էջ 90–93:

Սարդարյան Կ. 2002, Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., Երևան, «Նաիրի», 224 էջ:

Վիրաբյան Վ. 2016, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 830 էջ + 12 էջ ներդիր:

Закарян А. 2003, Александр Кулебякин и Армения. Ереван, Авторское издание, 238 с.

Закарян А. 2016, Армения в литературно-общественной деятельности В. Брюсова. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 168 с.

ОВАННЕС ТЕР-МАРТИРОСЯН (А-ДО)

РУБЕН СААКЯН

Резюме

Ключевые слова: А-До, Нор Баязет, Ереван, Дашнакцутюн, армяно-татарские столкновения, Арцах, Ван, Ростом, Арам Манукян, Никол Агбалян, Февральская революция, Салмаст, Сардарапат, Гарегин Нжде.

Общественно-политический деятель и ученый Ованнес Тер-Мартиросян, известный под псевдонимом А-До, родился 4 января 1867 г. в г. Нор Баязете. Там же получил начальное образование. В 1881 г. переехал в Ереван, где окончил епархиальную школу, а в дальнейшем учился в Харьковском университете (1905 г.), в Петербургском Психоневрологическом институте (1907 г.). А-До был очевидцем русской революции (1905–1907 гг.), армяно-татарских столкновений (1905–1906 гг.), почти досконально изучил их причины и написал специальный труд «Армяно-турецкое столкновение 1905–1906 гг.» (1907 г.).

С 22 июня по 10 августа 1909 г. А-До побывал в нескольких губерниях Западной Армении, где собирал статистические сведения о численности армян, ремеслах, о сельском хозяйстве, путях сообщений, о турецкой налоговой системе и др. Обобщив данные, издал специальную работу «Вилайеты Вана, Битлиса и Эрзерума» (1912 г.). За исследование «Освободительное движение в России» (1908 г.) был приговорен к тюремному заключению.

Во время Первой мировой войны О. Тер-Мартиросян всецело занялся оказанием помощи беженцам, спасшимся от Геноцида, осуществленного младотурецким правительством Османской империи. После победоносной самообороны г. Вана и провинции (май 1915 г.) поехал в Васпуракан и собрал информацию об армянских погромах, учиненных турками и курдами и самообороне армян. Впоследствии издал исследовательскую работу под названием «Большие события в Васпуракане. 1914–1915 гг.» (1917 г.).

В 1917 г. А-До побывал в армянских селениях Северной Персии, где собирал сведения не только об армянах, но и об айсорах и курдах.

После Февральской и Октябрьской революций, когда с русско-турецкого фронта ушла русская армия, Армения оказалась один на один против турецкой армии. О. Тер-Мартиросян как очевидец подробно излагает те меры, которые предприняла недавно восстановленная армянская государственность (28 мая 1918 г.). Он детально свидетельствует о той героической борьбе, которую вела в мае 1918 г. армянская армия и народное ополчение против турецких войск во время битв при Сардарапате и Баш-Апаране.

В своих исследованиях О. Тер-Мартиросян отмечает то тяжелое положение, в котором оказалась Армения: многотысячные беженцы, разоренная страна; особенно критическая ситуация создалась после нападения кемалистской армии и советизации Азербайджана (1920 г.). После того,

Պատմաբանասիրական հանդես 2022 № 2 Историко-филологический журнал

как 2 декабря 1920 г. в значительной части Армении была установлена советская власть, но в Сюнике продолжалась борьба во главе с Гарегином Нжде, новая власть отправила несколько общественных деятелей, в том числе О. Тер-Мартиросяна, чтобы они убедили повстанцев сложить оружие.

Начиная с 1919 г. по 1949 г. А-До работал заведующим статистическим отделом в союзе кооперативных товариществ Армении (Армкоопторг).

Все научные работы О. Тер-Мартиросяна имеют историческое значение как первоисточники. Он один из исключительных ученых, который в своих трудах использовал не только периодику, архивные документы, но и собственные наблюдения очевидца тех или иных событий.

Рубен Саакян – д. и. н., заведующий отделом новой истории Института истории НАН РА, ведущий научный сотрудник. Научные интересы: российско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные сражения, история армянской полиции. Автор 10 книг, сборников документальных материалов и около 100 статей. rubensahakyan58@gmail.com

HOVHANNES TER-MARTIROSYAN (A-DO)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

Key words: A-Do, Nor Bayazet, Yerevan, Dashnaktsutyun, Armenian-Tartar clashes, Artsakh, Van, Rostom, Aram Manukyan, Nikol Aghbalyan, February Revolution, Salmast, Sardarapat, Garegin Nzhdeh.

Public-political figure Hovhannes Ter-Martirosyan, known under the pseudonym A-Do, was born on January 4, 1867 in Nor Bayazet town. Here he received his primary education. In 1881 he moved to Yerevan where he graduated from a diocesan school and later studied at the Kharkov University (1905), at the St. Petersburg Psychoneurological Institute (1907). A-Do was an eyewitness to the Russian Revolution (1905-1907), the Armenian-Tartar clashes (1905-1906). He thoroughly studied the causes of the clashes and wrote a special work on the conflict – “Armenian-Turkish clash of 1905-1906” (1907).

From June 22 to August 10, 1910, A-Do visited several provinces of Western Armenia where he collected statistical information on the number of Armenians, crafts, agriculture, communications, the Turkish tax system, etc. Having summarized the data, he created a special work “Vilayets of Van, Bitlis and Erzurum” (1912). He was sentenced to prison for his study “The Liberation Movement in Russia” (1908).

During the First World War I, H. Ter-Martirosyan was fully engaged in helping the refugees who survived the genocide. The latter was organized by the Young Turk government of the Ottoman Empire. After the victorious self-defense of the city and the province of Van (May 1915), he went to Vaspurakan and collected information on the Armenian pogroms committed by the Turks and Kurds as well as the self-defense of Armenians. Subsequently, Ter-Martirosyan published a research work entitled "Great Events in Vaspurakan in 1914-1915" (1917).

In 1917 A-Do visited the Armenian villages of Northern Persia where he gave information not only about the Armenians but also the Assyrians and Kurds.

After the February and October Revolutions, when the Russian army left the Russian-Turkish front, Armenia found itself alone against the Turkish army. H. Ter-Martirosyan as an eyewitness described in detail the measures taken by the newly restored Armenian state (May 28, 1918). He wrote a detailed report on the heroic struggle of the Armenian army and the people's militia against the Turkish army during the battles of Sardarapat and Bash-Aparan (in May 1918).

In his studies, H. Ter-Martirosyan described the difficult situation in Armenia; thousands of refugees, a devastated country; a particularly critical situation developed after the attack of the Kemalist army and the Sovietization of Azerbaijan (1920). As the Soviet power was established in a significant part of Armenia on December 2, 1920, but the insurgence continued in Syunik led by Garegin Nzhdeh, several public figures including H. Ter-Martirosyan were charged by the new government with a mission to persuade the rebels to lay down their arms and stop the fight.

Beginning from 1919 up to 1949 H. Ter-Martirosyan worked as a head of the statistical department in the Union of Cooperative Partnerships of Armenia (ArmCoopTrade).

Ruben Sahakyan – Doctor of Sciences in History, Head of the Department of Modern History of the NAS RA Institute of History, Leading Researcher. Scientific interests: Russian-Turkish Front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. Author of 10 monographs, collections of documents, around 100 articles. rubensahakyan58@gmail.com